

2020 թ.

Հարցաշար

հայոց լեզվի օլիմպիադայի հանրապետական փուլի  
Տևողությունը՝ 150 րոպե

### 10-րդ դասարան

Երեք երաժիշտ ընկերներ գնում են օտար երկիր՝ իրենց երգ ու նվագով մի կտոր հաց վաստակելու: Նրանցից ավագը կույր էր:

Երկար դեզերելուց տանջահար՝ կանգ են առնում մի անձանոթ աշխարհում:

Երկրի բռնակալ թագավորը՝ բղջախոհ մի այր, հրամայում է պալատ բերել նվագածուներին, որ նրանք զվարճացնեն իրեն ու իր շուրջը սեթևեթող հարճերին, նանրամիտ ու հացկատակ կոչնականներին:

Երաժիշտներն օրնիբուն նվագում–երգում էին արքայի ճոխ գինարբուքներում: Սակայն հայրենիքի սրտմաշուկ կարոտից նրանց մեղեդիներն օրեցօր հնչում էին ավելի թախճոտ ու տրտմաշուք: Եվ ամբարիշտ արքան մի օր սրդողած հրամայեց լքել իր երկրի սահմանները, այլապես կգլխատի երեքին էլ:

Թշվառ աստանդականները, սահմուկած հետապնդող զինվորներից, առանց ասպազենի քառասմբակ հեռացան՝ փորձելով ականակիր խավարում գտնել տունդարձի ճամփան:

Երբ աղոթարանը ոսկևորվեց, և շամանդադի մեջ ուրվագծվեցին թագավորի սպառազեն զինվորները, կույրը հանկարծ շեշտակի ձգեց երասանը, իջավ երիվարից: Նա խարխափելով մի բուռ հող վերցրեց, ....

– ....

1. Ավարտիր՝ տեքստը երկու–երեք նախադասությամբ: Վերնագրի՝ ր այն: (2 միավոր)
2. Արտահայտի՝ ր քո վերաբերմունքը հայրենիքի, հայրենի հողի նկատմամբ մակդրային հինգ բառակապակցությունների միջոցով: (1 միավոր)
3. Գրի՝ ր **բղջախոհ, հարճ, նանրամիտ, հացկատակ, կոչնական, աստանդական, ասպազեն, քառասմբակ, աղոթարան, շամանդադ** բառերի հոմանիշները կամ բացատրի՝ ր բառակապակցությամբ: (2 միավոր)
4. Երկու նախադասությամբ արտահայտի՝ ր **ուրվագծվել** բառի բազմիմաստությունները: (2 միավոր)
5. Կազմի՝ ր մեկական բարդ և ածանցավոր բառ **պարականոն, անտարակույս, գերազանց, ներհակ** բառերի արմատներով: (2 միավոր)
6. Գրի՝ ր **դեզերել, սրդողել, գլխատել, սահմուկել** բառերի իմաստն արտահայտող մեկական դարձվածք: (1 միավոր)
7. Տրված եռյակներից ընտրի՝ ր մեկական բաղադրիչ և կազմի՝ ր բարդ ածանցավոր բառեր. *օղանցք – տարեմուտ – հարավարևելյան, մեծահարուստ – կերպար – տիկին, չխոսկան – անգթություն – զրպարտանք, վարչապետ–ստորագրություն – սրբազան*: (2 միավոր)
8. Վերածի՝ ր աշխարհաբարի և մեկնաբանի՝ ր. «Բժի՛շկ, բժշկեա՛ զանձն քո»: (1 միավոր)
9. Ի՞նչ է նշանակում «Արիադնայի կծիկ» թևավոր խոսքը: Տո՛ւր ծագման մեկնաբանությունը: (2 միավոր)
10. Գրի՝ ր շարադրություն «Անկեղծ խոստովանություն» վերնագրով (երկու էջի սահմաններում): (5 միավոր)